

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

ВОПРОСЫ
ЯЗЫКОЗНАНИЯ

Պարտիայի Մրազում հատուկ ուշադրություն է դարձված ՍՍՌ-ում ազգային և լեզվական հարաբերությունների զարգացման նոր էտապին: Սովետական լեզվաբանության համար, ասված է հանդեսի առաջին համարի «ՍՄԿ XXII համագումարը և Սովետական Միության ժամանակակից ազգային լեզուների զարգացման օրինաչափությունների ուսումնասիրման խնդիրները» առաջնորդող հոդվածում, սոցիալիստական ազգերի զարգացման կապակցությամբ, մեծ կարևորություն է ստանում ազգային լեզուների զարգացման օրինաչափությունների անհապաղ և բազմակողմանի ուսումնասիրությունը: Այս նպատակով ՍՍՌ-Մ ԳԱ սխտեմում կազմակերպվել է նոր Գիտական խորհուրդ, որը պետք է զբաղվի այնպիսի հանգուցային հարցերի լուծարանությամբ ու լուծմամբ, ինչպիսիք են լեզուների փոխազդեցության և զարգացման օրինաչափությունները սոցիալիստական հասարակարգում, ուսաց լեզուն և սովետական հասարակությունը, լեզվի նորմավորման սկզբունքները և խոսքի կոլտուրան: Ինչպիսիքն պետք է լինի ազգային լեզուների հետագա հակատագիրը, աշխոյ միանման են այդ լեզուների հետագա զարգացման հեռանկարները, անհայն հարցեր են, որ պետք է լինեն սովետական լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Այս խնդրի իրականացման համար անհրաժեշտ է ուշադրությամբ հետևել ՍՍՌ-Մ ժողովուրդների տարբեր լեզուների հասարակական ֆունկցիաների փոփոխություններին և այդ լեզուների փոխհարաբերություններին: Այս նպատակով սոցիալիստական ազգերի ազգային լեզուների զարգացման օրինաչափությունների հարցերով զբաղվող նորակազմ Գիտական խորհուրդը լեզվաբանների ուշադրությունն է հրավիրում հետևյալ նախնական պրոբլեմների վրա, որոնց ենթակետերը մանրամասնորեն շարադրված են առաջնորդող հոդվածում. 1) ՍՍՌ-Մ ժողովուրդների լեզուների զարգացման և փոխազդեցության ներկա վիճակի ուսումնասիրության պրոբլեմները և խնդիրները. 2) ժամանակակից ուս-

սերների, նրա զարգացման և ֆունկցիաների ուսումնասիրության խնդիրներն ու պրոբլեմները. 3) Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների լեզուների զարգացման և փոխազդեցության ներկա վիճակի ուսումնասիրության պրոբլեմները և հեռանկարները:

Վ. Ի. Գրիգորեի «Ռուսաց լեզվի ծայնավորների (у, ы, и) դիֆերենցիալ հատկանիշները» հոդվածը նվիրված է ռուսերենի ծայնավորների դիֆերենցիալ հատկանիշների փորձառական ուսումնասիրության հարցին: Նախաճան լուրջ նյութին անցնելը, հեղինակը համառոտակի խոսում է երկու տեսական ուղղությունների՝ նաեւաճան վիճակագրական տեսության և դիֆերենցիալ հատկանիշների տեսության մասին, որոնք ներկայումս մեծ տեղ են զբաղում խոսքի հնչյունների ավտոմատիկ հաճաճանքը նվիրված աշխատություններում: Գտնելով, որ դիֆերենցիալ հատկանիշի հասկացությունը պարզորոշ ու հստակ չէ այդ հարցով զբաղվող լեզվաբանների մոտ (Ր. Յակոբսոն, Մ. Հալլե, Գ. Յանտ և ուրիշներ), հեղինակը առաջարկում է իր բնորոշումը: Նա նշում է, որ ներկայումս ռուսերենի դիֆերենցիալ հատկանիշների սխտեմը բոլորովին էլ որոշված չէ: Այնուհետև հեղինակը մանրամասնորեն նկարագրում է այն փորձերը, որոնք կատարվել են ծայնավորների դիֆերենցիալ հատկանիշներն ուսումնասիրելու համար: Հոդվածում կան բազմաթիվ սխեմաներ, դիագրամներ, աղյուսակներ և այլ նյութեր, որոնց հիման վրա հեղինակը զարգացնում է իր սեփական տեսությունը:

«Գիսկուսիաներ և բնաերկումներ» բաժնում է զետեղված Ե. Կուրիլովիչի «Համեմատական լեզվաբանության մի անի ֆիկցիաների մասին» հոդվածը, որ հեղինակը նշում է, բեավանդական հնդերուպաբանությունը ազգակից ձևերի համեմատությունը երկար ժամանակ զերադասել է ներլեզվական վերլուծությունից: Այս մտեցման հետևանքով հահաի աբճանագրվել են ոչ իրական լեզվական օրինաչափություններ: Ազգակից լեզուների փաստերի մակերեսային համեմատությունը պատճառ է դարձել նաև որոշ կեղծ հնչյուրների ստեղծմանը: Հեղինակը ներկա հոդվածում անդրադառնում է սլավոնական շերտադրության ուսմունքի մեղ տեղ գտած նման մի սխալի՝ շերտված կարն ծայնավորների ին-

տոնացիայի հարցին: Վերջում եզրակացնում է, որ եթե պատմա-համեմատական լեզվաբանությունը մանրակրկիտ կերպով հաշվի չառնի ուսումնասիրվող լեզուներից յուրաքանչյուրի ներհամակարգային հարաբերությունները, ապա հա կարող է կանգնել երկու վտանգի առաջ: Գրանցից առաջինը վերականգնումն է կեղծ տարբերի, որոնք ոչ մի ժամանակ և ոչ մի լեզվում գոյություն չեն ունեցել, իսկ երկրորդը՝ կեղծ հնչյունական օրենքների արձանագրումը, որը հետևանք է հնչյունաբանական և ձևաբանական երևույթների ոչ պարզորոշ սահմանազատման:

Այս բաժնում է գետնի վրա դրված Վ. Իվանովի «Ուսումնասիրություն հին հայերենի հնչույթաբանական համակարգի մասին» հեղեղը: Կարևորագույն հետ ունեցած նրա հարաբերության մեջ՝ հոդվածը, որտեղ հեղինակը հաստատված է համարում այն թեզը, թե հին հայերենի հրնչույթաբանական սխեման ունեցել է մի շարք շեշտի ձայնից հնչույթներ, որոնք համապատասխանում են հին հնդկերենի շեշտի ձայնիցներին: Հեղինակական պատմա-համեմատական լեզվաբանության համար շատ կարևոր է պարզել այն հարցը, թե ինչպես է հին հայերենի լի-ժ-ժի հնչույթների շարքը զարգացել ավելի հին հրնչ-եվրոպական համակարգից, որի մեջ կար հնչեղ հնչույթների միայն մի շարք (շեշտի ձայնիցներ): Հոդվածում խոսվում է հիմնականում հայերենի պայթյալանքների շեշտազանց հարցի մասին: Հեղինակը վերջում տալիս է իր հիմնական եզրակացությունները:

Հնչույթների դիֆերենցիալ հատկանիշների հարցին է նվիրված Ս. Նուրի, Չ. Մուրիդիայի և Վ. Բլոխիայի պատասխան հոդվածը Բ. Պիտոլովի: Հեղինակների եզրակացությունն այն է, որ թեև սպեկուլյոր վերլուծությունը հրնչյունաբանական ուսումնասիրությունների նոր էտապ է, սակայն չի կարելի սահմանափակվել միայն նման վերլուծությամբ՝ մի այնպիսի բարդ երևույթի էությունը պարզելու համար, ինչպիսին հնչույթն է: Հնչույթի ուսումնասիրությունը հնարավոր է միայն փոխադարձ կապի և փոխադրությունների մեջ գտնվող խոսքի հնչյունների բոլոր կողմերի նաշվածման դեպքում:

Քարգմանության լեզվաբանության տեսության հիմնավորմանն է նվիրված Ս. Բեվզինի և Վ. Բոգոնցովիցի հոդվածը, որտեղ հեղինակները առաջին անգամ լեզվաբանության պատմության մեջ փորձում են տալ քարգմանության լեզվաբանական տեսության հիմնավորումը: Հոդվածում հեղինակները քարգմանության տեսության իրենց մոտեցումն են շարադրում, որի հիման վրա հնարավոր կլինի, ինչպես պնդում են հեղին-

ակները, լեզվաբանական տերմինոլոգիայով ստեղծել մի տեսություն, որը, բացի տեսական նշանակությունից, կունենա նաև գործնական նշանակություն: Հոդվածում արձանագրվում են հետևյալ հարցերը. 1) քարգմանության լեզվաբանական տեսության առարկան, 2) քարգմանության պրոցեսը լեզվաբանական տեսակետից, 3) քարգմանության պրոցեսի իրականացման տեսակետներ, 4) քարգմանության տեսությունը և լեզվական կապերի տեսությունը:

Առեկյան ուղրո-ֆիննական լեզուների բալթիական փոխադրությունների հարցին է նվիրված Գ. Կուսրիի հոդվածը, որը վերնագրված է «Քառային փոխադրություններ և էքստրենզեր»: Հատկապես ուշագրավ է հեղինակի եզրակացությունը, որ, ի դեպ, հաստատում է նաև Բ. Սերբերեն-նիկովի արտահայտած ենթադրություններից մի ֆանիսը. 1) Ուղրո-ֆիննական լեզուներում կան որոշ բովոլ բառեր, որոնք փոխ են առնվել բալթիական լեզվախմբից՝ մեր բովականությունից առաջ 3-րդ հազարամյակի սկզբում. 2) Առեկյան ուղրո-ֆիննական լեզուների այն բառամբերի վերլուծությունը, որը փոխառյալ է հնդեուրոպական աղբյուրներից, հանգեցնում է այն եզրակացության, որ իրոք ՍՍՌՄ եվրոպական մասի անտառային գոտու հարավային կեսում մեր բովականությունից առաջ 3-րդ և 2-րդ հազարամյակների սահմանագծում գոյություն է ունեցել չվկայված հնդեուրոպական մի լեզու:

Ամսագրի «Իրադական և մարեմատիկական լեզվաբանության» բաժնում գետնի վրա են Յու. Կուրոգովի «Մայա գրության մեկնական վերծանությունը» և Գ. Բլոնոգովի «Վիճակագրական մի ֆանի օրինաչափությունների մասին ռուսերենի գրավոր խոսքում» հետախոնական հոդվածները:

Մավսյուն գրախոսություն է նվիրված «Թուրքական բանասիրության հիմունքներ» (Philologiae turcicae fundamenta) աշխատության 1-ին հատորի վերաբերյալ (1959 թ., Wiesbaden, XXIII + 813 էջ + 1 քարտեզ), որ հեղինակություն է արևմտաեվրոպական, ամերիկյան և բուրբ բուրբագետների մի խմբի: Հիշյալ գիրքը, ինչպես նշում են գրախոսները, առաջին աշխատությունն է, որ նվիրված է բուրբական լեզուների սխեմատիկ բնութագրությանը՝ ինչպես առանձին վերցրած, այնպես էլ երբանց ամբողջության մեջ: Գրախոսված է նաև W. K. Matthews-ի «Russian historical grammar» (University of London, 1960, XIX + 362).

Գ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ

Ծոփօսեր ЛИТЕРАТУРЫ

Հանդեսի երրորդ համարի՝ ժամանակակից բեմաներին վերաբերող առաջին նյութը Փ. Սվետովի «Հերոսի բարոյական կոդեքսը» հոդվածն է, որ հեղինակը փորձում է 1961 թ. արձակի մի ֆանի պորթլեմների բննարկմամբ տեսնել այն նորը, որն ունի մեր գրականությունը:

Հեղինակը ընդգծում է հատկապես այն երևույթը, որ 1961 թ. արձակը նշանակալից ուղադրություն է դարձել հերոսի բարոյական բնութագրին: Այդպիսի ուղադիր վերաբերմունքի հեղինակը պատճառաբանում է կոմունիստական բարոյականության հաստատմամբ մեր իրականության մեջ: Հոգվածում մասնավորապես խոսվում է Վ. Կոշևտովի «Մարգարիտի ֆարտուղարը», Ս. Բարասևի «Ուղիական ընդվզում», Էմ. Կազակիչի «Կապույտ տետր», Բ. Քեդևու «Աղբիկներ» և մի ֆանի այլ ստեղծագործությունների մասին, որոնք վերաբերում են ժամանակակից կյանքին: Հոգվածագիրը ցույց է տալիս այն հայդություններ, որոնց հասել են հեղինակները նորի, նոր բնավորության կերտման խնդրում: Այս խնդիրների հետ կապված հեղինակը բննարկում է նաև մեր գրականության համար կարևոր այնպիսի խնդիրներ, ինչպես ժամանակակից հերոսի և ժամանակակից կոնֆլիկտի, հեղինակի բարոյական դիրքորոշման հարցեր և այլն:

Վ. Պանկովի «Քառի փառք» հոգվածում շոշափվում է մեր պոեզիայի մեջ նորաբարության հարցը: Հեղինակը գտնում է, որ համարձակությունը պետք է լինի արդյունավետ, հարստացնի հոգևոր աշխարհը և լեզվական կուլտուրան: Վերջում հեղինակը հանգում է այն բեզին, բե նորաբարությունը արդյունավետ է այն դեպքում, երբ բառը դառնում է նոր երեվույթների ու բնավորությունների, Լպոխայի տիպական գծերի մարմնավորման միջոց: Մեր պոեզիայի նորաբարության հարցերին է նվիրված նաև Ա. Տուրկովի «Պրոֆեսիոնալի՞զմ բե նորաբարություն» հոգվածը:

«Սովետական գրականության փորձից» խորագրի տակ տեղավորված են Ա. Մ. Գուրկու անվան համաշխարհային գրականության ինս-

տիտուտի այն խորհրդակցության նյութերը, որ բննարկվել է «Ռուս սովետական գրականության պատմության» եռհատորյակը:

Խորհրդակցության մասնակիցները նշելով այդ աշխատանքի անհրաժեշտությունը, միաժամանակ բարձրացնում են սովետական գրականության հետ կապված շատ հարցեր, նշում «Գրականության պատմության» եռհատորյակի բերությունները և անհրաժեշտ համաթում, որ այդ բերություններն ուղղվեն նոր հրատարակության ժամանակ:

Ամսագրի խմբագրությունը իր կողմից նկատում է, որ խորհրդակցությունը, ինչպես և «Պատմության» բննարկումը մամուլում, ցույց է տալիս, որ մեր գրականագիտությունը ի վիճակի է սովելլ խորն իմաստավորելու սովետական գրականության պատմությունը, որ այժմ մենք բեակոխում ենք գրականության ուսումնասիրման նոր Լտապ: Խմբագրությունը մասնավորապես նկատում է, որ եռհատորյակի մեջ նշված նոր շրջանը, որը կապվում է պարտիայի XX համագումարի հետ, պետք է լուսաբանվի ավելի հանգամանորեն և հասցվի մինչև մեր օրերը:

Գրականության տեսության հարցերին է նվիրված Ե. Նրմիլովայի «Պոեզիան և մարեմատիկան» հետաբհհական հոգվածը, որում հեղինակը բննարկում է բանաստեղծական տեսաների մարեմատիկական ուսումնասիրության և կիրեբեհտիկայի ու պոեզիայի փոխհարբերության հարցերը:

Գեղագիտության և կյանքի փոխհարբերության հարցերն են շոշափվում Վ. Կոմիևովի «Գիտականությունը՝ դա կյանքի հետ կապն է» հոգվածում: Հեղինակը նկատում է, որ «գեղագիտությունը և կյանքը» այժմ ոչ այնքան գիտական, որքան կենսական պորբեհմ է: Գեղագիտության պարտականությունը և նրա ներքին պահանջն է՝ լինել կյանքի կողմից առաջ բաշվող մեծ խնդիրների մակարդակի վրա: Հեղինակը առաջ է բաշում գեղագիտության մեջ պատմականության սկզբունքը հետեողականորեն պաշտպանելու հարցը, ինչպես և գեղագիտության կողմից արվեստի բուն Լությունն ուսումնասիրելու հարցը:

Վ. Գեևպրովի «XX դարի Գոտտո Ֆաուստ» հոգվածը նվիրված է գեղմանական նշանավոր գրող Թոմաս Մանի «Գոտտո Ֆաուստ» վեպին: Գեևպրովը հանգամանորեն բննարկելով վեպը, նշելով նրա ստավելությունները և որոշ սահմանափակությունները, այն եգրակացությանն է հանգում, որ վեպում հեղինակը գաղափարական նշանակալից առաջխաղացում է կատարել:

«Արտասահմանյան մամուլի լճերից» խորագրի տակ տպագրված են Վլադիմիր Պոզների «Ալմիրի պատերազմը՝ արտացոլված գրքերում», Բ. Բոնովի «Ժամանակի հետ համաժայլ», Դ. Բոնովի «Պայմար Բուկսի համար» և այլ հոդվածներ:

Գրողի վարպետության հարցերին է նվիրված նշանավոր դրամատուրգ Ալեքսանդր Շտեյնի «Աշխատանքը ժամանակակից բեմայի վրա» հոդվածը, որում բննարկվում է դրամատուրգի գաղափարական համոզվածության, ժամանակակցի և հավերժականի փոխհարաբերության, կոնֆլիկտի, զեղարվեստականության և այլ հարցեր:

«Լեն գրողներն իրենց աշխատանքի մասին» ընդհանուր վերնագրի տակ տեղափոխված են Յարոսլավ Իվաչկեիչի «Զրույց գրքերի մասին», Ստանիսլավ Վզոդսկու «Ինչու եմ ես գրում կոմունիստների մասին...», Լեոն Կուլչկովսկու «Պատմության ուժը և մարդկանց բախտը»:

Կազիմեժ Բրանդիսի «Հրապարակախոսի խոստովանությունը» և այլ հոդվածներ, որոնցում հեղինակները խոսում են իրենց ստեղծագործության, առանձին երկերի ստեղծման հետ կապված բազմազան հարցերի մասին:

Հարուստ է հանդեսի գրախոսությունների բաժինը, ուր տպագրված են գրախոսականներ Բ. Բրայնիենայի «Դարի ինքնակենսագրությունը», Լ. Վասիլյևի «Ալեքսեյ Սիլիչ Նովիկով-Պրիբոյ», ինչպես նաև Էդ. Մ. Ջրբաշյանի «Գրականության տեսություն», Է. Պ. Զինենի «Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործությունը և XIX դարեվերջի և XX դարեսկզբի անգլիական ռեալիստական գրականությունը» և այլ գրքերի մասին:

Հանդեսի ներկա համարի «Կատակով և լուրջ», ինչպես նաև «Խրոնիկա» բաժիններում արժանի է նաև գրականությանը վերաբերող մի շարք հարցեր:

Բ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ

